



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի Մ Ա Ր Ձ Պ Ե Տ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<29>> հուլիսի 2011թ.

N 258 - Ա

ք. Արմավիր

ԼՅՈՎԱ ԱՍԼԱՆՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ  
<<ԱՄԲԵՐԴԻ Հ.ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>  
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի վեցերորդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 929-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատարի 2011 թվականի հուլիսի 29-ի զեկուցագիրը և <<Դոդսի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցիչ Ջոիրաբ Մաղաքյանի 2011 թվականի հուլիսի 29-ի համաձայնությունը.

ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Ուսումնական հաստատության կառավարման իրավունքի հավաստագիր չստանալու պատճառով լուծել <<Ամբերդի Հ.Նավասարդյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լյովա Ասլանյանի հետ 2005 թվականի օգոստոսի 3-ին կնքված N 58 աշխատանքային պայամանագիրը:
2. <<Ամբերդի Հ.Նավասարդյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել <<Դոդսի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցիչ Ջոիրաբ Մաղաքյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2011 թվականի օգոստոսի 2-ից:

ՄԱՐԶՊԵՏ



Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ